

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

«ՊԱՅՔԱՐ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ»,
Հեղ.՝ Ս. Ե. Սեֆ.՝ Հրատ.՝ Անդրկովկասեան կուսակցական
պատմական նեմարանի, 1932 թ.

Թէեւ ուշ, անհրաժեշտ ենք համարում «վէմ»-ի ընթերցողներին ներկայացնել այս գիրքը, որ բաղկացած է 6 մասերից: Մէկը այդ մասերից լոյս է տեսել առանձին՝ «Աղեքանդրեան այգու զեղականարուրիներ» եւ արդէն գըրախօսած է «վէմ»-ում: Փաստորէն այս գիրքը յօդածների մի ժողովածուն է՝ կազմած կուսակցական նեմարանի յանձնաբարուրեամբ, հոկտեմբերեան յեղաշրջման 15-ամեակի առքիւ: Հեղինակը իր նախարարում նկատում է, թէ «չնայած մի շարք լոյս տեսած աշխատուրիների, Հոկտեմբերի պատմութիւնը մենք դեռ չունեն Անդրկովկասում»:

Սուածին յօդածը կոչւում է «1917 թւի յեղափոխական նախանշաները» եւ նւիրած է պարենաւորման անկարգութիւններին, որոնք կազմակերպւեցին սև հարիւրակայինների կողմից. մանրամասնորէն առաջ են բերած ոստիկանական զեկուցումները, որոնցից, ի միջի այլոց, երեսում է, որ հացը Թիֆլիսում մի կոպէկով բանգացել է, դարձել է $4\frac{1}{2}$ կոպէկ, իսկ բագւում միաը 17 – 18 կոպէկից հասել է 25 – 26 կոպէկի:

Խօսքը 1916 թւի մասին է: Ի՞նչ կասեն այժմ ընթերցողները, երբ հացը ո՞չ թէ կոպէկներով, այլ զննահատում է ուրիշներով շնորհիւ խորհրդային իշխանութեան: Սեփը տախու է կարեւոր

կենսամբերքների զները Թիֆլիսում 1914-ին եւ 1916-ին, որպէս, ի հարկէ, արջի ծառայուրիւն է մասուցանում ներկայ իշխանութեան, որովհետու ամէն մի ընթերցողի պիտի մոլի անհրաժեշտ եզրակացուրիները անել: Սեփը գտնում է, որ պարենաւորման հողի վըրայ ծագած շարժումները յեղափոխական են, թէնի իր բերած ոստիկանական տեղեկուրիները ցոյց են տալիս ոստիկանուրեան մօտիկուրիներ այդ խճնդրին: Թիֆլիսի միապետական «Գորոս կանագա» քերքի կազմակերպածը դուրս է բերած համայնալար – յեղափոխական գործ: Սեփը լոկ մի քանով է տարբերում միապետականներից, որ չարաշանուրեան «հերոս»-ներին միայն հայ չի ներկայացնում, այլ նաև քարար եւ վրացի:

Գրքի երկրորդ մասն է՝ «Բուշերկներ և մենցերկները 1917 թւի յեղափոխութեան մէջ», ուր հեղինակը տալիս է Անդրկովկասի 1917 թ. դէպքի պարզ նկարագրութիւնը եւ չի ծածկում, որ 1932 թւին էլ դեռ երկրպագու էր ժորդանիսին, որովհետու, հակառակ ամրող գրքի տւեալներին, որ մենչեւիկները շովէն – յետադիմական խղանականուրին էին վարում, գտնում է, որ «Դաշնակցութիւնը հայ ազգային բուրժուազիայի կուսակցութիւն է, իսկ վրաց Սոց. – Դեմոկրատիան գտնում է բուրժուազիանացման պրօցեսում»: Ան-

դրկուլասի այն ժամանակայ հռանք-ները նկարագրելիս՝ Սեփը ստիպւած է ընդունել, որ «նրա (Դաշնակցութեան) փաստական ծրագիրն էր, ինչպէս ցոյց տևեց պատերազմը, պայքար յանուն Թրքահայաստանի ազատութեան եւ նրա միացումը Ռուսահայաստանին մի ամ-րողութեան մէջ»:

Բանտորական խորհուրդների Անդր-կովկասեան կենտրոնի եւ զինուրական խորհուրդների կենտրոնի պայքարը տեղն է մենշենիկների եւ բոլշևիկների պայքարի: Սեփի տած պատկերը նըշ-մարտութիւն է, որ միաժամանակ պար-զում է եւ էս-էրների անպէտութիւնն ու դաշնակցական ընկերների կրատրա-կանութիւնը թիկունքում տեղի ունեցող այդ պայքարի մէջ: Սեփը, հայենյելով մենշենիկներին եւ նրանց սնբրային քայ-լերը քննադատելով՝ միշտ այնպէս է ներկայացնում ինդիրը, որ էլի մենշե-նիկները յեղափոխութեան զինուր են դուրս գալիս, իսկ Դաշնակցութիւնը ոչ, թէեւ «Դաշնակցութեան մէջ գոյուրիւն ունեին զիւղացիական լայն զանգաւծ-ներ եւ բանուրների մի մասը եւ այդ պարտաւորեցնում էր հայ ազգային բորբոքագիային: 1917-ին Դաշնակցու-թիւնը իրեն չէր հակադրում մենշենիկ - էս-էրական բլոկին»: Ուզում է ասել, որ Դաշնակցութիւնը չէ, այլ նրա մէջ եղող գիւղացիներն ու բանուրները ստի-պեցին, երէ ոչ յայտնի չէ, թէ ի՞նչ դիրք պիտի բռնէր Դաշնակցութիւնը: Դաշնակցութիւնը հարածողը եղաւ հէնց ինքը հայ բորբոքագիան պատե-կան նիւր գրելիս բոլշևիկի համար ի՞նչ առիր կայ հայենյելու, որ դիմում է նման անհերերութիւնների: Սեփի Ան-դրկուլասը Թիֆլիսի ու Բագուս են, իսկ թէ ի՞նչ եղաւ երեւան, Պարս նա-կառաւմ՝ չկայ ոչ մի խօսք:

Երբորդ զլուում պարզում է ձըշ-մարտութիւնը Շամիորի մասին: Այս հաւածը պէտք է որ բարգմանէր ար-տասահմանի հայ ընթերցադների հա-

մար: Սեփը ապացուցանում է Ժորդա-նիս - Ռամիշվիլի - Զլենկելիի եւ Մու-սաւարի դերը Շամիորի դէպքերում, ուր հազարաւոր նակատից վերադարձող ռուս զինուրները յարձակում կրեցին քարտ խուժանի կողմից, վրաց զրա-հապատ զնացքի եւ վրաց հրամանա-տարների դեկավարութեամբ (իշխան Մաղանը՝ հրամանատար Գանձակի քա-րար զինաւծ ուժերի): Բերւած փասուե-րը հերիի են վրաց մենշենիկների եւ «Մուսաւար»-ի դերը հաստատելու հա-մար, քայց այսուն էլ Սեփը միտում ունի խառնելու հայերին, թէեւ հայե-րը ոչ մի մասնակցութիւն չեն ունեցել Շամիորի սպանդանոցին, ոչ էլ նրա նա-խապատրաստման: Սեփը վրացի զնա-պես Ախմետելովի ցուցելունքն է բե-րում, իբր թէ նոյն բանը պնդել է եւ Պապաջանեանը, որ հայ զօրամասերն էլ պիսի մասնակցին: Թէեւ ոչ մի փասու չի բերում, թէ որ եւ է հայ մասնակ-ցել է այդ սպանդանոցին: Սեփը առանձ-նապէս ընդգծում է Ռամիշվիլի չքին-դապենները:

Ի՞նչ ուժերով զինարափեցին կամ փորձեց զինարափել ուսւական զօրա-մասերը: — Վրաց զրահապատը Արխա-գաւայի հրամանատարութեամբ, 600 վրացի զինուրներ, 5000 խուժան զինաւծ քարտում, դեկավ նաֆիրէկովի եւ Սաֆիկիրգսկով: Առաջին զնացքները զինարափում են, «քայց հետեւելուն-ը դիմադրում են»: Զինարափուած ուազմազնացքներին հետեւում էին տասնեակ նորերը: Նրանք մերժում են զինարափեւ: Դուրս են բերում մարտ-կոցները, շղթայ կազմում եւ սկսում է դաժան պայքարը: Մաղանվի զօրա-մասերը մորքում էին հազարաւոր ռուս զինուրները: Ի պատասխան դրան, ռազ-մագնացքները ուժականում էին քարտ զիւղերը: Դիակների լեռներ էին կու-տակւած երկարագծի երկու կողմը: Ազգային զգացումները բացւեցին: Զը-

բահապատը թնդանօթով քանդում է եւ նրա պետք՝ Արխազաւան սպանում :

Խազմագնացքները գալիս էին, զալիս. մի մասը զինարափում էր, բայց տասնեակներ նամբայ էին բանում զենքով: Նրանք զնացին բազու, այնուղից հիւսիս՝ իրենց հետ տանելով զենքն ու ստելուրիւմը: Նրանք զնում էին կռւելու ուսու կալածատիրական - բուրծուական հակայեղափոխութեան դեմ «Երբ մենք մօնեցանք Շամխորի կամուրջին (փոխ - զլխապետ Ռւստիւմի զեկուցումից), տեսանք սիրու պատուղ տեսարան: Հինգ ջարդած զնացքներ դեռ այրում էին, նրանց ճախ կողմը՝ ջարդած զրահապատը: Թափած էին զանգաւծօրեն այրած զինուրների դիմաներ, իսկ զեսի ծորում էր զնացած զինուրների դիմաներ, իսկ զեսի ծորում էր զնացած զինուրների դիմաներ: Բոլոր դիմաները մերկացած էին եւ անենաչելի: Այդ սարսափերից մազերս թիզ - թիզ էին կանգնում»: «Ես մի էշ է մենշևիզմի զործունելութեան պատմութեան, որով նա բացայալորեն միացաւ թաքար բուրծուա - կալածատիրական հակայեղափոխութեան» հետ: Բայց միայն մենշշեւիզմի զործունելութեանը բոլշևիկները իրենք մերժ չունեն: Բոլշևիկները, որ ուսու զինուրին ստիպեցին դատարկել անհատը, մենակ բողնել հայերին գլ-իիք փաշայի զօրքերի դեմ:

Յաջորդ մասը բնորոշում է Մուսաւաթի բնկերային էութիւնը: Սեֆը տալիս է Մուսաւաթի պատմութիւնը: Ակզրում՝ համբաւմական գալումներ, յետոյ՝ համարութիւնական: Վկայու - թիւններ է թերում Ռասուլ - Զադէից, հետաքրքիր փաստական տւեալներ այն աղբիւրներից, որոնք մեր ծնոքնեն չկան:

«Դաշնակցական պատմաբանները, գրում է Սեֆը, մեղադրում էին Անդրկովկասի բոլշևիկներն անդրկովկասի համար: Կարգախոսը խաղաղութեան մասին նա հասկա - նում էր այն ձեռով, որ պահանջում էր միանալ Թիւրքիային եւ այլն: Իսկ թէ ի՞նչպէս էին իրենք բոլշևիկները այդ կարգախոսները հասկանում, Սեֆը չի

նոյեմբեր 1917 թ.) նա ներուժ պայ- քար չէր մզում «Մուսաւաթի» դեմ, ա- պացուցանում էին, որ այդ շրջանում մուսաւաթականները օժանդակում էին բոլշևիկներին միւս ըմկերվարական կուսակցութիւնների դեմ: *) Սպիցի- ֆիկների (Հայ սոց. - Դեմ) առաջնորդ Բ. իշխաննեանը այդ դէպքերին նւիրել է մի ամբողջ զիրք («Քագրի մահմետական շարժման նպատակները», ուս- տերէն), որտեղ մեկնելով դաշնակցա - կան դիրքաւորումից՝ ապացուցանում էր, որ մուսաւաթականները օժանդա- կում էին բոլշևիկներին, իսկ վերջն- ները մուսաւաթականներին: Սեֆը այդ փասոր չի ժխտում, միայն բացառում է նրանով, որ բոլշևիկների դեմ էին էս-էրները եւ դաշնակցականները, նը- րանք նրանց չէին կարող միանալ, իր- բեւ իրենց հակառակորդների: Սեֆը գրում է. «Մուսաւաթ կուսակցութիւնը բուրծուա - ազգային կուսակցութիւն էր, որը հենց որ իր գրուշը բարձրացրեց՝ նպասակ դենելով Ռուսիայից ամ- բողջովին բաժանել եւ վերամիանալ Թիւրքիային՝ իր դէմք տեսաւ, որ ըն- կերվարականների բուկի Փրազների տակ վերեւում էր ուսուական կարէտիզմը եւ նրա դաշնակցները: Հասկանալի է, որ այդ պայմաններում Մուսաւաթը օգտագործում էր մի շաք կարգախո- սներ, որ հրապարակել էր բոլշևիզմը: Ազգերի ինքնորոշման կարգախօսը նա հասկանում էր, իրեւ պայքար ամբող- ջովին բաժանելու համար: Կարգախո- սը խաղաղութեան մասին նա հասկա - նում էր այն ձեռով, որ պահանջում էր միանալ Թիւրքիային եւ այլն: Իսկ թէ ի՞նչպէս էին իրենք բոլշևիկները այդ կարգախոսները հասկանում, Սեֆը չի

*) Մուսաւաթը օգնում էր բոլշ- ևիզմին, որպէսզի ճակատը քայլայւի, որով օգնում էր թրքական ուժերի յա- սածիւաղացմանը:

բացատրում: Եւ այդ միատեսակ կարգախոս ունեցողները ցոյց տվին իրենց «Շամխոր»ում, բայց դրանից յետոյ էլ Սեփի համար «Մուսաւար»-ի ընկերային էռուրինը չպարզեց: «Փանձակի նաևանցում է կինորոնացած քուրք ազնականութեան 50 տոկոսը, գրում է նա: Դա էր այն ընկերային խաւը, որի վրա յենած էր «Մուսաւարը», բայց բոլորովին սխալ կը լինի, որ «Մուսաւարը» անւանեն հակայեղափոխական կալածատերերի կուսակցութիւն»:

Երեխ Մուսաւարը ինչ - ինչ պատճառներով դեռ 1932-ին էլ համակրելի էր բոլշեվիկներին, որովհետեւ Գաշնակցութիւնը բուրժուական կոմ մանր բուրժուական անւանողները վաղուց արդէն հշել էին կոմկուսի շարքերից, իսկ Սեփը Մուսաւարին տալիս է «գետնիրատական միտումներ»: Հին բարեկամութիւնը երեխ չի ժամկոտում:

Եւ, վերջապէս, վերջին մասը՝ *Բագայայ Հոկտեմբերը*, որ նիմիւած է բագրայ դէպֆէրի նկարագրութեան: Այսուղ Սեփի համար Մուսաւարը հակայեղափոխական է, եւ խունապահար բոլշեվիզմը հայ ազգային խորհուրդնի է դիմում: Այս պատմութիւնը շատ ծանօթէ: Բերենք Ս. Շահումեանի գեկոյցը Մոսկվային: «Անդրկովկասը մտել է զինած պայքարի մէջ խորհրդային իշխանութեան համար: Երեխ օր շարունակ, մարտ 30-ին, 31-ին եւ ապրիլ 1-ին, բագրում կատաղի պայքար էր: Կուռում էին մէկ կողմից խորհրդային կարմիր գուարդիան, կարմիր նաւասորմիջը եւ հայ ազգային զօրամասերը: Միւս կողմից վայրենի մահմետական զօրաբաժիկները եւ հայ ազգային զօրամասերը: Միւս կողմից վայրենի մահմետական զօրաբաժիկները: Արդիւթեները փայլուն էին մեզ համար: Թշնամին զախշախուած էր ամբողջովին: Մենք բելազրեցինք մեր պայմանները, որոնք ընդունեցին: Սպանածների թիւն

էրն է երկու կողմից երեխ հազար հրդիւ:

Մենշեւիկները մեղադրում էին բոլշեվիկներին, որ բագրի դէպֆէրը բաղադային կութիւնը չէին, «որ դա մահմետականների եւ հայերի հին բըշնաւութիւնն էր»: Այդ առքի Շահումեանի 1918 թ. 15 ապրիլ գեկուցումը ասում է: «Մեր քաղաքի ազգային կազմը մեզ վախեցնում էր: Մենք վախենում էինք, որ պայքարը կընդունի ոչ ցամկալի զոյն: Մենք նոյնիսկ սահպեցինք հայկական գնդի օգնութեան դիմել: Խորհրդ, իշխանութիւնը բագրում օդից կախուած էր մահմետական ազգային կուսակցութիւնների շնոր - ին: Այդ կուսակցութիւնները բեզական եւ խանական մուտքականութեան հետ միասին ամրացել են Գանձակում ու Թիֆլիսում եւ ուզում են Անդրկովկասը վնել Թիվրիոյ հովանաւորութեան տակ: Մենք պիտի դիմադրէինք եւ օգունեցինք առիրից, երբ փորձեցին յարակւիլ մէր ձիւորների վրա, եւ յառաջ շարժցինք ամբողջ նակատով: Մենք ունեինք արդէն զինած ուժեր 6000 հոգի, Դաշնակցութիւնը՝ մոտ 3 - 4 հազար, որոնք մէր սրամադրութեան տակ էին: Վերջինների մասնակցութիւնը մասմէր բաղադային կութին տըւեց ազգային կոտորածի զոյն, բայց դրամից խուսափել անկարելի էր, մենք գիտակցարք գնացինք այդ բանին»:

Ի՞նչ հայկական ուժեր էին բագրում, Սեփը չի բացառում. դրանք հայկական կազմակերպւած զինուորական մասներն էին, որոնք պիտի զայխին դէպի տանկական նակատ: Հայերը չէին ուզում մարտեան դէպֆէրը եւ մարտ 30-ին երեկոյեան 11-ին Հայոց ազգային խորհուրդը փորձում էր համաձայնութեան զալ մահմետականների հետ զօրամասների անցքի համար: Սեփը այդ բանակցութիւնը բացառում է դաշնակութեակարպների հակաբարուշեւիկութեամբ, իսկ իրը թէ շարքայինները կուտեցին բալ-

շեմիների և այլ միասին։ Դիտաւորեալ սխալներ՝ միտումնաւոր կառուցւածքների համար։

Ամբողջ ժողովածուն արժէք ունի միայն իրեւ նիւթերի եւ վաւերազրերի

աղբիւր այդ դէպէերի մասին, իսկ Սեֆիի մեկնարանուրիւններն, ի հարկէ, անարժէք եւ անընդունելի բաներ են մեծ մասամբ։

Ն. ԲԱԴԱԼՅԱՆ

Գ. ԳԻՒԶԱԼԵԱՆ՝ Պատմական խնդիրներ», Հրատ.՝ «Արագ»

Հրատ. Ընկերութեան, թիւ 1, Պէյրուր, 1937.

158 էջնոց այս գիրքը իր մէջ ամփոփում է 4 յօդւած՝ «Մարքսիզմը և Աղդգային հարցը», Մէծ յորելեանի առմի», «Մտեփ. Նազարեան» եւ «Մկ. Փորթուզալեան»։ Այս յօդւածներից առաջինը եւ «Մտ. Նազարեան»-ի երկու գլուխները արտասպած են «Գրօշակ»-ից, «Մէծ յորելեանի առրիւ»-ն ու «Մ. Փորթուզալեան»-ը՝ «Էլեմենտ», իսկ «Մ. Նազարեան»-ի վերջին գլուխը՝ «Համազգային Տարեգիրք»-ից։ «Պատմական խնդիրներ»-ը, ենդինակի ասելով, «մէկ փորձ է մտքի մէկ պոտոյտ կատարելու հասարակական - քաղաքական գաղափարների աշխարհում»։ Եւ իրապարփչ, յաջող ու արժէքաւոր փորձ, պէտք է առելացնենք մենք։

Գ. Գիւզալեանը մեր այս սակաւարիւ գարզացած պատմագէտներից է — Գէորգեան Ճեմարանի ու Փարայի Համալսարանի ընթացաւարտ եւ փորձաւածուուցիչ ու գրող — որ ո՛չ միայն տէր է մասնագիտական հմտութեան, այլ եւ սիրում է քափանցել պատմական - հասարակական երեւոյթների խորքը եւ նիւթը մշակել գիտական բարեխնդուրեամբ։ Ունենալով հանդերձ փիլիսոփայական որոշ աշխարհայեցք՝ նա գերծ է դաւանամալական նեղմուռիւն - նից, եւ բննուրեան առարկայ վերցրած խնդիրները ուսումնասիրում, վերլուծում ու ներկայացնում է կատարեալ ազատուրեամբ, միակ ելակէտ ունենալով առարկայական ֆշմարտուրիւնը, որքան, ի հորկէ, հնարաւոր է առարկա-

յականուրիւնը ընկերային - պատմական հարցերում։

Իր այս յատկուրիւնները փայլուն կերպով երեւան են զալիս եւ «Պատմական խնդիրներ» գրքում։ Այսպէս, «Մարքսիզմը եւ Ազգային հարցը» տուածում Գիւզալեանը ամենամահապերբեկիտ հմտուրեան է ենթարկում մարքսիզմի ըմբռումները ազգային հարցի մասին, ենթում է նրա մոլորութիւնները եւ յանում միակ նշանարիտ եղանակուրեան, թիւ՝ «ազգութիւնը մշակուրային միուրիւն է, ընդհանրութիւն»։ Ի հարկէ, խօսքը գաղափարական բնորոշման մասին է եւ ոչ բնախոսական - կենսաբանական։ Յետոյ՝ «ազգութիւնը ստեղծագործութիւն է, մտքի, հոգու, նիւթական ու քաղաքական ստեղծագործութիւն, իսկ դրա համար անհրաժեշտ է ազատուրիւն, ազգային ուժերի լիակատար ազատուրիւն»։ Ազատուրիւնը ընկերային բոլոր երեւոյթների լուսաբնուրեան հայսպայմանն է Գիւզալեանի համար։

Յօդւածը վերջանում է ենթեւալ խօսերավ. «Մշակույթը իր էուրեամբ եւ հիմքով մարդկային է, կազմած է մարդու գաղափարի հետ. մարդի է, որ մշակում է, ստեղծում է նոր բան. սակայն, մարդը ապրում եւ ստեղծում է ազգային մշակայրում ու կրում է նրա կնիքը։ Մարդու ստեղծագործութիւնը ազգային ձեւով է հանդէս գալիս։ Իր հիմքով մարդկային՝ մշակույթը արտայալուրեամբ ազգային է, կազմակերպութեամբ միջազգացնելու»։